



Մ. ԷՍԿԻՉՅԱՆ

Կ Ա Ր Ո Տ Ն Ա Յ Ր Ե Ն Ի

Հայրենի՛ երկիր, քեզի՛ եմ կարոտ,
Օղիդ կենսատու, ջուրիդ կաթնահամ.
Իցի՛վ բլլայի քու շեներուն մոտ,
Հայրենի՛ երկիր, իմ նո՛ր Հայաստան:

Ա՛խ, ո՛րչափ դեռ ես հեծեմ տխրալի
Հեռո՛ւ ափերու, օտա՛ր մարդոց մոտ,
Եվ երագեմ իմ եղբարց պանծալի:
Ե՛րբ պիտի առնեմ ես իմ վառ կարոտ:

Իցի՛վ բլլայի քու գիրկից մեջ վես,
Փարեի՛ քեզի, սիրո՛ւն Հայրենիք,
Եվ այնուհետև վախճանեի ես՝
Շնչած մեր զեփյոտ, տեսած մեր երկինք:

Հայրենի՛ երկիր, հզո՛ր Հայաստան,
Կանչե՛, հավաքե՛ քու պանդուխտ որդիք՝
Թափառողներուն այս անապատան,
Եվ դարձո՛ւր անոնց նոր կյանքի մարտիկ:

Հայրենի՛ երկիր, քեզի՛ եմ կարոտ,
Քու նոր շեներուն, ջունչիդ մայրական.
Իցի՛վ բլլայի եղբայրներուս մոտ,
Պայծա՛ն Հայրենիք, Սովե՛տ Հայաստան:

Պլավգիվ (Քուլդարիա). 29 մարտ 1946

